

ԿԱՐԳ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՈՐԾ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

1. «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.3 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) նախագահի կողմից կարգապահական վարույթի գործերը դրանք նախապատրաստող անձանց (**այսուհետ՝ Նախապատրաստողներ**) ուղարկելու կարգը:
2. Կարգապահական վարույթ հարուցելուց հետո Պալատի նախագահը սահմանված ժամկետում ուղարկում է կարգապահական գործը ըստ ազգանունների այբբենական հերթականությամբ նշված Նախապատրաստողին, բացառությամբ սույն կարգի 4-րդ կետում նշված դեպքերի:
3. Կարգապահական գործը Նախապատրաստողին է հանձնվում համապատասխան ստացականով, որտեղ նշվում են նյութերի ցանկը և էջերի քանակը: Կարգապահական գործը հանձնվում է Նախապատրաստողին Պալատի գտնվելու վայրում:
4. Պալատի նախագահը կարող է շեղվել սույն կարգի 2-րդ կետում նշված հերթականությունից, եթե՝
 - 1) Նախապատրաստողը ծանրաբեռնվածության պատճառով չի կարող այդ գործը նախապատրաստել, կամ
 - 2) Նախապատրաստողը կարգապահական վարույթի կողմի հետ ունի մտերիմ կամ կախյալ այլ հարաբերություններ, կամ
 - 3) կարգապահական գործը կապված է Նախապատրաստողի կողմից նախապատրաստված կամ նախապատրաստվող այլ կարգապահական գործի հետ. կամ
 - 4) կարգապահական գործը հանձնվում է մի քանի Նախապատրաստողների.
 - 5) գործի մասնագիտացումից (քրեական կամ քաղաքացիական) ելնելով հերթական Նախապատրաստողը չի կարող գործը պատշաճ նախապատրաստել:
5. Պալատի նախագահը սույն կարգին համապատասխան գործը վերահանձնում է այլ Նախապատրաստողի, եթե՝
 - 1) կարգապահական գործը հանձնելուց հետո Նախապատրաստողն ինքնաբացարկ է ներկայացրել, կամ արձակուրդի կամ այլ հարգելի

պատճառով չի կարողանալու ժամանակին կատարել իր պարտականությունները.

- 2) հնարավոր չի եղել հնգօրյա ժամկետում կարգապահական գործը հանձնել Նախապատրաստողին:
6. Սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում, նոր Նախապատրաստողը կարգապահական գործը նախապատրաստում է գործն իր կողմից ստանալուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:
7. Սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Նախապատրաստողը կարգապահական գործը ստացել է հինգօրյա ժամկետի խախտմամբ, կարգապահական գործը Նախապատրաստողին (նաև նոր նախապատրաստողին) համարվում է հանձնված կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումն ընդունելուց հետո՝ հինգերորդ օրը: